Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 216 - Ա
որոշման

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ «ՈՒԱԶ ՄԱԿՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Արարատի մարզերում բնակվող սոցիալապես անապահով պայմաններում ապրող չորս և ավելի երեխաներ կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխա/երեխաներ ունեցող քաղաքացիներին գյուղատնտեսական աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպման նպատակով ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենաների և գյուղատնտեսական սրսկման սարքերի նվիրաբերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Արարատի մարզեր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	103,290,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Արարատի մարզերում բնակվող սոցիալապես անապահով պայմաններում ապրող չորս և ավելի երեխաներ կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխա/երեխաներ ունեցող քաղաքացիներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի ապրիլի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենաների (12 հատ) ձեռքբերում և նվիրաբերում՝ 99,600,000 դրամ. 2) գյուղատնտեսական սրսկման սարքերի (3 հատ թևերով և 3 հատ տուրբո քամիարով) ձեռքբերում և նվիրաբերում՝ 3,690,000 դրամ. 3) միջոցառումները նախատեսվում են իրականացնել 2025 թվականի ապրիլի 6-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) ՈՒԱԶ մակնիշի ավտոմեքենաների (12 հատ) ձեռքբերում՝ 99,600,000 դրամ. 2) գյուղատնտեսական սրսկման սարքերի (3 հատ թևերով և 3 հատ տուրբո քամիարով) ձեռքբերում՝ 3,690,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է համագործակցություն Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից. 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

07.04.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ